

Ի ՎԵՐՁԻՆ ՕՐ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

— ՆՈՒԱԳ —

Զըւարճախառն աւարտեցաւ ամսոյս այս վերջ .

Զովացեալ գետն առատաջուր զափամբք ըստերջ .

Երկինք ամպովք պըճնազարդեալ լըթագոյն թոյր ,

Ուստի նդ երեկս ածէր արև զոսկի ՚ի սփիւռ :

Ալիք գետոյն խառն ընդ մեղոյշ որպէս կերպաս

Աղնիւ անկեալ մանուշկագոյն ՚ի փայլ աննուազ ,

Անթիւ բըղէտ ցուցանէին մուայլ և պայծառ

Հանդէպ մըաից Արեգական անդր ՚ի կատար :

Յայս նոր տեսիլ չքնաղ բնաւին աչք ոչ յագին ,

Նարօտաներկք հանճարարուեստք նկարել կամին ,

Եւ ցանցընկէցք գետոյն ձրկունս վարմեն փայլուն ,

Զոր բերեն ալք ՚ի պէսպէս խաղս և կամ ՚ի հուն ,

Ոչ թասելով գայ՝ այլ անձայն սուրայ զեղու

Յոռոգանել յանդ և յայդի զխորիսխ մեղու :

Հ . Ա . Ճ .



ՀԻՆԳ ՇԱԲԱԹ 07ԱՊՐԻԿԻ ՄԵԶ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԱՑԻՈՒՑ

ՑԱՓՐԻԿԵ

(Տես Երես 49 :)

Երբ խարոյկը բոլորովին մաշեցաւ ,
Ճոյ մէկէն փութաց ծակին մէջէն մո-
խիրն ու կայծերը դուրս հանելու . յե-
տոյ փղի մսին կտորները հոտաւէտ խո-
տերու մէջ պլելով այն նորահնար փը-
ռան մէջ , որ աղէկ ջերմութիւն կը պա-
հէր , զետեղեց ու վրան տաք մոխիր
լցընելով ծածկեց : Յետոյ բոլորովին
վրան ուրիշ երկրորդ խայրոյկ մը վա-
ռեց , որ երբ այրելով սպառեցաւ , մի-
սը ինչպէս պէտք էր եփուած էր .

Այն ատեն կերակուրը փոէն հանեց
և այն ախորժակ գրգռող միսը կանաչ
տերեներու մէջ զնելով , փառաւոր մար-
գագետնին վրայ սեղանը պատրաստեց .
պաքսիմատ , օղի , սուրճ , մինչեւ մերձա-
կայ առուակին յստակ ու զով ջուրն
իսկ չմոռցաւ :

Մնանկ պատրաստուած կերակուրը
մարդուն աչքը կը զուարթացընէր . այլ
Ճոյ մտքովք գուշակելով թէ որչափ ա-
խորժելի պիտի գար կերողաց , սրտո-
վը՝ առանց հպարտութիւն զգալու՝ կ'ու-
րախանար :

— Ահաւասիկ ճամբորդութիւն մը ,
կ'ըսէր շարունակ ինքնիրեն , առանց
յոզնութեան կամ երկիւղի . ճաշը ժա-
մանակին պատրաստ , անկողին մը մըշ-
տընջենաւորապէս առկախեալ . ալ աս-
կէ աւելի մարդ ինչ կընայ պահանջել :